ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1951-Ա « 19 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ԿԱՇԵԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ Հ.304/2
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱԿ ԱԼԲԵՐՏԻ ԱՎԱԳՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արտակ Ալբերտի Ավագյանի (ծնված 13.07.1985թ.) դիմումը՝ ըստ որի ներկայացված փաստաթղթերի և չափագրման համաձայն, փաստացի զբաղեցված հողամասի մակերեսը կազմում է 147.08քմ (իսկ 24.59քմ մակերեսը գտնվում է կառուցապատման գծից դուրս և ենթակա չէ օրինականացման):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 24.11.2022թ. հ.ԱՏ-24112022-01-0843 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 14.10.2024թ. հ.Հ-11564 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 04.12.2024թ. հ.20-Ել-Դ-89824-22 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց հ.304/2 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց հ.304/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արտակ Ալբերտի Ավագյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 122.49քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 122.49քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց հ.304 հասցեի բնակելի տանը տրամադրել «Շենգավիթ, Կաշեգործների փողոց հ.304/2 տուն» հասցեն:

4. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Շենգավիթ, Կաշեգործների փողոց հ.304/2 հասցեում գտնվող 122.49քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ